մաքրել։ Եւ յորժամ փէշքէշ տալ գնացաք զայմա-
խամին, յետ ելանելոյ ի դուրս՝ քէհեա սուլթանին
կայր ի պատրաստի և նստէր, և արգիլեաց զվարդա-
պետն և բազում աղերսանս ասաց թէ Զայն առնիցէ
վասն մեր, ասէ, և վասն հայցուածոց սուլթանին։
Եւ պատասխանեաց վարդապետն թէ Վասն գրամի է՝
բաշխեցից, և վասն օրինաց է՝ կարող չեմ այդմ։ Եւ
նա ասէ. Տաճկացնեմ և առնեմ զայդ. և ասէ վար-
դապետն. Այդմ ո՞ կարող է ասել ինչ։ Եւ նա շար-
ժեալ ի բարկութիւն անգոսնեաց և անարգանօք յետս
դարձոյց, և եկաք ի տեղի մեր։ Եւ նոքա պատրաս-
տէին զհարսանիսն, և կարծեալ թէ զիջուսցեն և կամ
բռնութեամբ հրամայել տացեն ի ձեռն բռնակալաց։
Յետ աւուրց ինչ ապա եկին եէնկիչէրիք և օտապա-
շիք խնդրելով զայն։ Եւ ես զզուիմ յերկարելն, այն-
քան թէ՝ Մեք զհարսանիսն առնեմք, դու յեկեղեցին
բան մի՛ ասեր նոցա։ Եւ ասէ վարդապետն. Բան և
գործ մեր այդ է առաւել, չարեացն չար ասել և
բարեացն՝ բարի։ Եւ այսու ոչ կարացին, և ելեալ գնա-
ցին. այլ ունէին միտս զի գտեալ երէց մի բռնութեամբ
եէնկիչէրոցն պսակ դիցեն։ Եւ ի Կիրակի աւուրս յՈւս-
կիւտար էաք, և կրկին զերիցունս ի տունս նոցա ա-
ռաքեաց խրատել, զի ասէին յայսմ աւուր լինել հար-
սանեաց նոցա։ Եւ անտի ևս գիր առաքեաց առ Այ-
վատի որդի՝ օրհնութեամբ խրատս և պատուէր օրի-
նաց և հայրապետաց, նաև յանիծից զգուշացոյց բա-
զումս, և ասաց. Որդեա՛կ իմ, Աստուած վկայ և քա-
հանայքս ամենայն, զի եթէ ըստ օրինի գնասցես՝ ոչ
առնելով զվատթարութիւնդ. հրաժարեա՛ այսի, և զո-
րում դուստր կամիս՝ առնել տամ քեզ և ես կնքա-
հայր լիցիմ քեզ. դու գիտես, այսուհետև անպարտ
եմ և այսու թղթիս առաջի Քրիստոսի մտանելոց եմ
ընդ քեզ։ Եւ այսու ևս ոչ եղև, այլ բերեն պատգամ